



Վիճակ-սպարան ՄՆՏԻԿՆԱՆ ԵՂԲԱՐՑ — ԴԱՆԻՔԵ

“ՓԻՒՆԻԿ,,Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոհմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսում, նասիրութիւններ. Հայոց գաղթային հոսանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոտանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
 - 3.—Գիտական նորութիւններ, կէս-ժանօթ ժողովրդոց կեանքին ու բարքին մանրամասնութիւններ, հռչակաւոր երկրախոյզներու երկերէն քաղուած:
 - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
 - 5.—Կիսամտեայ ընդհ. քաղաքական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեղեկութիւններ:
 - 6.—Արտասահմանի եւ գաւառական քրթակցութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ


Եգիպտոսի համար	Տարեկան	Փր. 10
» » » » » »	Վեցամսեայ	» 6
Արտասահմանի համար	Տարեկան	» 13
» » » » » »	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	բուրլ 5

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Վ.է.թ.օ. — Գ.	Միթիկներն յ'եգիպտոս
Լեոնովանի վր Յուշատետրը. ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ	Խառն Լուրեր
Քեօսի Ուրուագծեր. (Վ.էստա). ԴԻՄԱԿ	Խաղաղութեան Համաժողովը

Ձեռագիրները եւ շեն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր: Զամակ, յարուած եւ բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ԲԻՒՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE **Ք Ի Է Ն Ի Կ**
 INSTITUTION CENTRALE
 LE CAIRE

ԵԳԻՊՏՈՍ
 ՏՐԻՍՏՆԻՍ... 10
 ՎԵՅԱՄՍԵԱՅ 6
 ԲԱԺԵԳԻՆԸ
 ՎԱՆԻԿ Է


ՓԻԻՆՏԻԿ

ԱՐՏԱՅԱԶՍԱՆ
 ՏՐԻՍՏՆԻՍ... 13
 ՎԱՅԱՄՍԵԱՅ 7
 ԿՈՎԿԱՍ
 ՏՐԻՍՏՆԻՍ ԲՊԼ 5


ԿԻՍՈՒՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ս. ՏՄԻՐԻ

1 ՅՈՒՆԻՍ 1899

ԹԻԻ 5

Վ Է Թ Օ

Եզիպտոսի հայ գաղութին վարչական, տնտեսական, կրօնային և կրթական գործերը երկար տարիներ կրած են ազգեցութիւնը այն յոսի գրութեան՝ որու շնորհիւ անհատական կամքերու կամ աւելի ճիշդ կամայականութեանց կ'ստորագասուին հաստատուած օրէնքներ և որոշ սկզբունքներ որոնք գոյութեան իրաւունք ունենալ կը թուին աւելի իբր ձեռքան թէ իբր հիմազգ. գործառնութեանց. երբեմն ալ, ինչ որ յուեզոյն է, այս հակասական և իրար չեզոքացնող երկու տարրերը — օրէնք և կամայականութիւն — տարօրինակ համաձայնութեամբ և պատասխանատուութեան բացարձակ ուրացումով մը՝ յուպէս յուկամ կը վարեն սղգային գործոց ղեկը և փոխանակ ուղղակի նպատակին առաջնորդելու՝ անել կացութեան և վտանգատր հոսանքներու կը մատնեն ազգին նաւը:

Այս վնասարեք գրութեան պատճառները մէկէ աւելի են: Առաջին և զլիսուորը այն սխալ համոզումն է

որով կը կարծուի թէ մեր տիպոսաւոր, բարձր դիրքի տէր և հարուստ ազգայինները, որոնց միակ արժանիքը այդ է՝ տոհմային կեանքի և ազգային օրէնքներու հասկցողութեան տեսակէտով, կրնան օգտակարապէս և յաջողութեամբ վարել վարչական գործոց վերին հսկողութիւնը այն ազգին՝ որուն արիւնը կը կրեն թէն՝ ո՛չ լեզուն կը խօսին, ո՛չ պատմութիւնը գիտեն և ո՛չ անոր օրէնքներուն և աւանդութեանց հմտութիւնը ունին: Եւ ցուալի է որ այս սխալ ըմբռնումով վարչական ժողովոյ անդամակցութեան կոչուող անձինք շատ պարագաներու մէջ փոխանակ զծուած օրէնքներու համեմատ շարժելու՝ կարգախօսի մը կ'սպասեն, այս կամ պէն տիպոսաւորին բարձրագոյն հրամանին կամ կամքին կը դիմեն՝ որոշում մը տալու կամ տնօրինութիւն մը ընելու իրենց սեղանին ներկայած աւելի կամ նուազ կարևոր խնդրոց մասին:

Երկրորդ պատճառ եղած է թող և չէզոք դիրքը եկող դացող Առաջ-

“ՓԻՒՆԻԿ,,Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոհմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսում, նասիրութիւններ. Հայոց գաղթային հոսանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոսանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
 - 3.—Գիտական նորութիւններ, կես-ժանօր ժողովրդոց կեանքին ու բարեկեցիկ մանրամասնութիւններ, հոշակաւոր երկրախոյզներու երկերէն քաղուած:
 - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
 - 5.—Կիսամտեայ ընդհ. քաղաքական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեղեկութիւններ:
 - 6.—Արհասանմանի եւ գաւառական քրոնիկներ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար	Տարեկան	Փր. 10
» »	Վեցամսեայ	» 6
Արտասահմանի համար	Տարեկան	» 13
» »	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	րուբլ. 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վ.Է.Թ.Օ. — Գ. Մ.Թ.Թինկերն յ'Եգիպտոս
 Լեոնականի վր Յուշատետրը. ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ Խառն Լուրեր
 Քեօթին Ուրուագներ. (Վ.Էստա). ԴԻՄԱԿ Խաղաղութեան Համաժողովը

Ձեռագիրները եւ շեն դարձուի: Կ'ընդունուին ամեն տեսակ ազդեր:
 Նամակ, յղուած է բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ՔԻՒՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE **ՔԻՔՆԻՒՍ**
 INSTITUTION CENTRALE
 LE CAIRE



ԵԳԻՊՏՈՍ

ՏՐԵԿԱՆ... 10
ՎՆՑԱՄՍԵԱՅ 6

ԲԱԺՆԳԻՆԸ
ԿԱՆԻԿ Է



ԱՐՏԱՅԱԶՍԱՆ

ՏՐԵԿԱՆ... 13
ՎՆՑԱՄՍԵԱՅ 7

ԿՈՎԿԱՍ
ՏՐԵԿԱՆ ԲՊԼ 5



ՓԻԻՆՏԻԿ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԳԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ս. ՏՐԻ

1 ՅՈՒՆԻՍ 1899

ԹԻԻ 5

Վ Է Թ Օ

Եգիպտոսի հայ զաղութին վարչական, տնտեսական, կրօնային և կրթական գործերը երկար տարիներ կրած են ազգեցութիւնը այն յոռի զրութեան՝ որու շտրհիւ անհասանելի կամքերու կա՛մ աւելի ճիշդ կամայականութեանց կ'ստորագասուին հաստատուած օրէնքներ և որոշ սկզբունքներ որոնք գոյութեան իրաւունք ունենալ կը թուին աւելի իբր ձեռքան թէ իբր հիմ ազգ. գործառնութեանց, երբեմն ալ, ինչ որ յոռեզոյն է, այս հակասական և իրար չեզոքացնող երկու տարրերը — օրէնք և կամայականութիւն — տարօրինակ համաձայնութեամբ և պատասխանատուութեան բացարձակ ուրացումով մը՝ յուզէա յուկամ կը վարեն ազգային գործոց զեկը և փոխանակ ուղղակի նպատակին առաջնորդելու՝ անել կացութեան և վտանգաւոր հոսանքներու կը մասնեն ազգին նալը:

Այս վնասաբեր զրութեան պատճառները մէկէ աւելի են: Առաջին և գլխաւորը այն սխալ համոզումն է

որով կը կարծուի թէ մեր տխուր սաւոր, բարձր դիրքի տէր և հարուստ ազգայինները, որոնց միակ արժանիքը այդ է՝ տոհմային կեանքի և ազգային օրէնքներու հասկացութեան տեսակետով, կրնան օգտակարապէս և յաջողութեամբ վարել վարչական գործոց վերին հսկողութիւնը այն ազգին՝ որուն արիւնը կը կրեն թէն ո՛չ լեզու և կը խօսին, ո՛չ պատմութիւնը գիտեն և ո՛չ անոր օրէնքներուն և աւանդութեանց հմուտութիւնը ունին: Եւ ցաւալի է որ այս սխալ բմբռնումով վարչական ժողովոյ անդամակցութեան կոչուող անձինք շատ պարագաներու մէջ փոխանակ դժուած օրէնքներու համեմատ շարժելու կարգախօսի մը կ'ապասեն, այս կամ այն տխուր սաւորին բարձրագոյն հրամանին կամ կամքին կը դիմեն՝ որոշում մը տալու կամ տնօրինութիւն մը բնելու իրենց սեղանին ներկայած աւելի կամ նուազ կարևոր խնդրոց մասին:

Երկրորդ պատճառ եղած է թոյլ և չեզոք դիրքը եկող դացող Առաջ-

նորընդհանուր կամ տեղապահներուն որոնք՝ հաւանօրէն անձնական նկատումներով չեն ուզած կամ չեն կրօնացած կորովի և վճռական ընթացք մը բռնել իրենց պաշտօնին և ազգային օրէնքներուն ճշգիւ և անաչառ կիրառութեան նկատմամբ, և անփոյթ գտնուած են հասկցնելու զիրենք չըրջապատող ժողովականաց թէ օրէնքը ամեն բանէ վերադաս է և թէ օրէնքն է որ պէտք է վարէ անհասնելը և ո՛չ թէ անհատը ախրէ օրէնքին վրայ:

Երրորդ պատճառ ժողովուրդի անտարբերութիւնն է զէպ ի ազգային գործերը, որով աչք կը գոցէ ամեն ապօրինաւորութեան և զեղծումի զէմ, անտարբերութիւն որ մեռելութեան կը հասնի տակաւ շնորհիւ այն հանգրստուէտ և անմտահոգ վիճակին զոր կ'ընձեռէ իրեն զլիսաւորապէս Եզիպտոսի ազգային հիմնարկութեանց բացառիկ հանդամանքը, ՚ի մէջ այլոց կրթական և եկեղեցական հաստատութիւններու ՚ի նպատակաւ կրօնակները:

Սակայն, ժամանակ է որ վերջ տրուի մեր ազգային օրէնքներու բռնաբարումին և տիպաւորութեան տիրապետութեան զոր զժբազդարար մենք մեր ձեռքով ստեղծած ենք:

Ճամանակ է որ օրէնքները, ըլլան սահմանադրական, ըլլան տեղային պահանջումներու վրայ ձեռած բանաւոր օրէնքներ, բացարձակ ախրեն մեր վարչային ամեն տեսակ գործերուն մէջ, և սրոնց անպայման գլուխ խոնարհեցնեն՝ Առաջնորդ, ժողովական, պէյ ու փոշա, քաջ համոզուած թէ օրէնքներու արդար գործադրութեան մէջ է հանրութեան օգուտը, ազգին շահը:

Գիտենք թէ ի՞նչ կ'արժեն Սուրբ թանի մահաշունչ և արիւնտա վէթոնները և ի՞նչ կրնանք ընել անոնց դէմ:

Գիտենք նաև թէ ի՞նչ կ'արժէ մեր

եկեղեցական գարաւոր աւանդութիւնները և իրաւունքները բռնաբարող Ռուսական Պալատէնիայի տրամագրած վէթոն և ի՞նչ ուժ ունինք անոր դէմ:

Չանանք գոնէ Եզիպտոսի նման ազատ երկրի մը մէջ, ուր օրէնքներու կիրառութեան երջանիկ զարագրուիք բացաւ պետական հայ մը, յարգել մեր ազգային օրէնքները և ջնջել միանգամ ընդմիշտ՝ զանոնք ոտնակախ ընող վէթոն:

Տիպաւոր վարիչներու անձեռնհասութիւնը, եկող գացող Առաջնորդներու կամ Տեղապահներու տատամստ ու մութ ընթացքը, եզիպտահայ ժողովրդին անտարբերութիւնը, ահա՛ երեք զլիսաւոր պատճառներ, երեքն ալ աղետաբեր ազգին. բայց ո՞վ է յանցաւորը, եթէ ոչ դո՛ւն, անտարբեր ժողովուրդ, որ ապուշ ապուշ կը նայիս բոլորախեղ գործուած զեղծումներուն. գուն որ սուսնց հեռատեսութեան, լոկ աւանդական հիացումով մը՝ պաշտօնի գլուխ կը կանչես քու զաւակներէդ անոնք, որ զքեզ ծնողը ընդունելէ զազրած են, այն օրէն որ քու շնորհիւդ կամ զքեզ շահագործելով՝ յաջողած են վերք մը շինելու կամ տխրոս մը խլելու. անոնք, իշխանի մը կամ իշխանուհոյ մ'երեկուան բազաւոր արքանեակները, այսօրուան մենաշնորհեալ միլիոնատէրները՝ մի մի փոքրիկ Համիսներ կարած են զլիսուդ, և դուն գարձեալ կը յս մա՛խս այդպիսիներուն և այդպիսիներ ըլլալու նկատողներուն յանձնելու ազգային կենսական ու փափուկ գործերուն զեկավարութիւնը ... Ալ հերիք է, սթափէ՛ մի քիչ, մի թողուր որ բարձրէն վէթոններ տեղան զլիսուդ, ազգային սրբազան իրաւունքները կոխտուող վէթոններ, ուզուն չի կրնա՛ս ձայնդ հասցընել այդ անմատչելի էակներուն ապարանքին գուռը:

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇՂՄԵՏՐԸ

Բ.

Ինչպէս ամեն Զէյթունցի, մենք
 օլ ունէինք տուն, այգի, պարտէզ,
 ածուք և ինչ որ կը կազմէ գիւղա-
 քաղաքացիի մը պէտքերուն ամբող-
 ջութիւնը: Եթէ հաւատալ պէտք է
 երևոյթներուն, բաւական բարեկեցիկ
 ընտանիք մ'էինք, սրբան որ ներէր
 հօրս ծուխերուն բերած հատոյթը:
 Քայց մեր տունը տարուէ տարի
 աւերակ դառնալու սահմանուած
 էր: քանի որ հայրս չէր կրնար ընել
 հարկաւոր նորոգութիւնները, չունէ-
 ինք գաւիթ կամ բակ, գաւիթն ըն-
 տանի կենդանիներուն յատկացուած
 էր, իսկ սրահը մեր տունէն վար ու-
 ըիչ տան մը տանիքն էր: Հոս հարկ
 է յիշել թէ բովանդակ Զէյթուն
 հարթ տանիքներով է, տանիքներուն
 ծայրերը գալար գալար հաւաքուած
 և յետոյ չորցած խոիւներէ շինուած
 են, որոնք հողի հետ շաղուած ու
 շարուած են: Եթէ կային շէնքեր,
 մանկական ուշո գրաւող, հասարակաց
 շէնքերն էին. որոնք, բացարձակօրէն
 խօսելով, եկեղեցիներ էին միայն, ո՛չ
 բաղնիք, ո՛չ պանդոկ, ո՛չ շուկայ, ո՛չ
 պաշտօնատունք և ո՛չ ուրիշ հանրային
 հաստատութիւն: Եկեղեցիները՝ միւս
 բնակարանաց ձևերէն տարբեր ձևերով
 շինուած ըլլալով՝ միւսներէն աւելի
 ակնազարաւ էին: կը յիշեմ, օր մը,
 երբ զարմանքով կը հարցընէի մօրս
 թէ՛ ինչո՞ւ եկեղեցիները մեծ և ըն-
 գարձակ էին, կը պատասխանէր.
 «Աստուծոյ տուն են, այդ պատճա-
 ռաւ հոյակապ և շքեղակերտ են»:
 Այդ պատասխանը՝ քիչ մը շատ խոր-
 հիլ կուտար ինձ, Աստուծոյ և անոր
 մեծութեանը վրայ. Աստուծոյ զոր

մայրս ինձ կը ներկայէր իբրև աղե-
 զարդ հայր մը, չարերը պատժող,
 բարիները վարձատրող: Եթէ մայ-
 րիկ, իր բոլոր ճիգն էր դիւ համա-
 զել թէ՛ գիշերները թափառական գե-
 ւեր կային, որոնց կը հանդիպէին
 փոքրիկ աղայք, եթէ իրենց ծնողքը
 չարչարէին, փողոցները չըջէին ու
 եթէ եկեղեցի չ'երթային: Սակայն
 եթէ չեմ մտցեր, մօրկանս բոլոր
 ճիգերն ու խլառները հալիւ մէկ
 ժամ կ'ազգէին վրաս, այնուհետև
 բնութիւնը կ'սկսէր զարձեալ իր դերը,
 մանուկ մ'էի չարածճի, ո՛չ խրատ,
 ո՛չ սպառնալիք ատակ էին զիս ես
 կեցնելու բնածին հակումներէս:
 Քանի հասակս զարգանար, այն-
 քան պէտքը կ'զգայի դրօսանքի: Հա-
 մաախը ընկերներս, չորս հինգ տարու
 կայտառ լեռնականներ, երամովին կը
 խաղային, բաւական էր ինձ անսնել
 անոնց խումբը, մէկը չէր կրնար
 զուգել եռանդս, կը թռչէի կը խառ-
 նուէի խումբին ու խաղը կ'սկսէր
 նոր կերպարան մ'առնուլ, մեր մէջէն
 ոմանք քար կը կրէին ու ոմանք ջուր,
 ոմանք հող կը շաղէին, իսկ ուրիշներ
 փայտ կը բերէին. մանկերամի մը
 յատուկ ժրութեամբ գործը կ'երթար
 սուաջ. փոքրիկ ճարտարագետներ,
 որմնագիր, քարակոփ, բանուր, ծեփոյ,
 ևլն, ևլն, կ'աշխատէինք կանգնելու
 տուն մը, շքեղ պալատ մը, որ ու-
 նեհար իր փուռը, ախոռը, խցիկները,
 կրկնայտրիկ, երբեմն ալ եռայտրիկ
 շէնք մը, որ ստէպ, ճարտարագե-
 տին անզուշութենէն կը փչէր յան-
 կարծ, ի մեծ վհատութիւն եռանդուն
 գործաւորաց, որ սակայն կը վերըս-

կաէին, ժողովել բեկորները, նոր ի նորոյ կառուցանել նոյնաձև շէնք մը, այսպէս կ'անցնէին ժամեր, կ'ըլլար իրիկուն, կ'ըլլար առաւօտ, և բանւոր ու որմնագիր կը հաւաքուէինք նորէն շէնքին վայրը, առաջ տանելու համար միենոյն կառոյցը, որուն տեսքը կը բաւէր անբացատրելի հաճոյքներ ազդելու մեզ, անհոգ ու երջանիկ մանկիկներուս: Շատ բնական էր այնքան եռանդուն վաստակներէն վերջ՝ զգալ քաղցի անդիմադրելի պէտքը. ուստի ամեն ոք տունը կը գառնար, մայրիկը նեղելու, փորիկը կշտացնելու և նորէն գառնալու ամենօրեայ դորձաստեղին:

Խոտիւ արգելուած էր ինձ հեռանալ տան շրջակայքէն. հետևապէս բոլոր նախճիրներս մեր թաղին մէջ կը կատարուէին, կամաց կամաց գանգատողները բազմացան. օր մը, զբացուհի մ'է սը կուգայ գանգատ յայտնելու ինձ գէմ, որ անոր տանիքին վրայ ցատքած միջոցիս քար մը ձգած և տան անօթներէն մէկը կտրած էի. ուրիշ օր մը, խեղճուկ պառաւ մ'է որ թոռնիկին թեկէն բռնած գոռում գոչում ձգած, մեր տունը կը վազէ, վասնզի խաղի մէջ քար մը նետած ու իր թոռնիկին ճակատը պատած էի: Ուրիշ օր մ'ալ. օր անմտաց ու նշանաւոր, զիս վիրաւոր բերին զրին մեր բակ-զրան առջև, հազիւ կը յիշեմ բոկ ստքէս արին կը հոսէր, զրոյցիկն շանը վրայ յարձակած էի, կենդանին ալ, առանց ակնածելու. մանկութենէս՝ ինքնապաշտպանութեան քան թէ չարամտութեան բնազդով, վրաս յարձակած ու խածած էր ձախ ոտքէս. կուլայի ու կուլայի, ո՛չ թէ խածուածքին ցաւէն այլ աւելի մօրս վերահաս բարկութեանը վախէն: Մայրս հասաւ. բարեբաղդօրէն հայրս բացակայ էր. դողը զիս առաւ, երբ տեսայ մօրս

թթու ճակատը. սակայն, խարուած էի. մօտեցաւ գորգով, զթոտ ձեռքերովս սկսաւ շփել վերքս. քիչ մը շունչ առի. անմիջապէս ազաչեցի որ հօրս չ'իմացնէ եղելութիւնը. վեր առին զիս ու տունը տարին: Եղբայրներս հոն չէին. երէցը՝ վարժարանն էր, ուսուցչութեամբ. միան ոք երկրորդ էր, բացակայ էր. միայն քոյրերս կային, երկուքն ալ մեծ, երկու կույմն նստած, սկսան հոգ տանիլ: Քանի մ'օր տունը բանտարկուեցայ, օրը տարի մ'էր՝ միթիթաբութիւն մ'ունէի լոկ. հայրս տեղեկութիւն չ'ունէր գործէն, կը կարծէի, որովհետեւ երբ որ տուն եկաւ ու զիս պառկած գտաւ, բան մը չ'ըսաւ ըսպանական. սակայն, շատ անգութ եղաւ պատրանքս, երբ խածուածքէն դարմանուելէ վերջ՝ հայրս անմիջապէս բռնեց թեկէս և ուզեց ամառիկ զիս գարոց, երեսս ի վեր նայելով զայլացայած և ըսելով թէ՛ միայն զբարոցը կրնար զսպել ինձ նման անտառակ մը: Վճիռն անգառնալի էր. տարաւ զիս մինչև գուռը գարոցին. կամացուկ մը պրծայ ձեռքէն և եկայ մօրս ծոցն ապաւինեցայ. սա, աւելի զիրազգած, չ'զիմանալով ազերսագին նայուածքիս, հօրս խոստացաւ որ այնուհետև շատ խելօք պիտի մնար ... և թէ՛ ամեն անգամ որ ինք ամօք երթար կամ այգի, իր հետը պիտի տանէր ու բերէր զանի: Այս կերպով, քիչ մը ժամանակի համար գտնէ, գարոց երթալու պատիժը չը կրեցի. գարոցի անունն այնքան տնախորժ հնչած էր ականջիս և այնչափ սարսափ ազգած էր վարժապետը մատաղ սրտիս ...

Գ.

ՁԻՆԱԳՆՏԱԿ — ՂԱՌԱՐԱՆԸ — ԵՂԱՅՐՍ
Աշնան երկրորդ ամսուն յաջորդած էր Չմեռը: Չէյթունի լեռնոս գիրքը

ձևեռուան ցուրան ու ամառուան տա-
պը սաստիկ ընելու կը նպաստէ. սա-
ռոյցները՝ ժայռերուն վրայ կարծր
բիւրեղներ կազմելով՝ հովի շնչէն
լեռնականաց մինչև սևիորները կը
դողացնեն. իսկ ամառուան կիլա-
նուտ արեւը՝ դարձեալ նոյն ապա-
ռաժներուն վրայ անդրադարձած՝ տա-
քութեան սաստիճանը կրկնապատիկ
կը բարձրացնէ. բայց օդի այս ան-
բարեխառն փոփոխումներն երբէք
չէին ազդեր ինձ: Մայրս իր ընական
հեզութեամբն ու ներսդամիս ոգովս
առիթ եղած էր մանկային համար-
ձակութեանս և յանդգնութեանս զար-
դացման:

Օր մը, կանուխ գուրս ելայ, սքան-
չելի տեսարան: չըջակայ լեռները,
դաշտերը, ձորերը, շէնքերը, բոլոր
առարկաները ծածկուած էին սպիտակ
պատանքով մը, օդին մէջ գնդիկներ՝
գետինը կը թափթփէին թաւալլար.
Ներս մտոյ շտապով, մայրս կանչեցի,
ցոյց տուի, երջանիկ գմայլմանս մէջ,
չըջա գտաւ ու տեսարանը. ժպտելով՝
հասիւրջ զիս ու բռաւ. «Տղաս, ձիւն
կուզայ, Աստուած վերէն կը տեղոյ
այդ հատիկները:» Մօրս այս պա-
տասխանն ապշեցուց զիս: Աստուծոյ
գաղափարը նորէն մտաւ մտքիս մէջ,
սկսայ վսեմ սոսկում մ'զգալ, այդ
անտեսանելի, բայց ամեն բանի խառ-
նուող էակին մտածումէն:

Քանի մ'օր վերջ, ա'լ ձիւն չ'էր
տեղար, բարկ ու կծու քամի մը կը
փչէր, ձիւնը կարծրացեր էր, տեսայ
որ մեր թագեցի աղայք, երկու կողմ
կազմած, կը նետէին իրարու ճերմակ
գնտակներ. մօտեցայ, ես ալ սկսայ
իրենց պէս բոլորակել ձիւնը ձեռքիս
մէջ ու նետել. մատներս կը սառէին.
բայց այդ նորակերպ զբօսանքի հա-
ճոյքէն ինքզինքս կորուսած էի: Խա-
ղացիւք ու խաղացիւք, մինչև որ
վերջալոյսը ծիրանի գօտիներ սփռեց

լեռներուն կողերը: Հայրս միտքս ըն-
կաւ. զիս բացակայ պիտի դանէր
եկեղեցիէն ու պատժէր. պատժուելու
երեակայութիւնն ուղղակի տարաւ
ձգեց զիս եկեղեցւոյ դուռը. բայց
ժողովուրդը խոնուած, տուն կը վե-
րադառնար. ես ալ խառնուեցայ ամ-
բոխին, եկայ շիտակ մեր տունը, բա-
րեպաշտ աղօթաւորի մը կերպ հա-
զած, միայն ձեռքերս ցուրտէն աբ-
մացած էի: Գողալով վազեցի նեա-
ուեցայ մօրս գիրկը, վառարանին մէջ
դրած էին ահագին կաղնիէ կոճղ մը,
որ կարմիր կարած, անոյշ տաքու-
թիւն մը կը սփռէր բոլորտիքը:

Վառարան ընտանի, քանի՜ հրա-
պուրիչ ես ու ցանկալի: Մինչ
դուրսը, կատաղի քամին կը մռնչէ,
գետերը կը սառեցնէ: անդին, շատ
մը անտէրունչ սրբեր, մերկ ու նօթի
փողոցները լքուած, կը սարսուտն ու
կ'ողբան. անցորդներէն ի գաւր կը
հայցին հաց, փայտ, հագուստ: Մինչ-
գետ ուղեւորը, խեղճ իշապան մը,
ձիւնապսակ լերան մը գաղաթը, կամ
կիրճի մը խորը, մինակ, ա'լ անդօր
առաջանալու, կ'ապասէ մահուան որ
գայ սոսկալի տանջանքէն ազատէ
զինք ու իշուկը. մինչգետ գուրսը
ձմեռը ի գործ կը գնէ իր բռնութիւնը,
ներսը հայրենի վառարանին շուրջը,
հայր, մայր, եղբայր, քոյր, մանուկ,
ու ծեր անխաիր աաքցած՝ քնաբեր
կրակին գէմ, բաղլըր ու ջերմ խօսակ-
ցութեան մը բռնուած են. հոն, պա-
պը կամ մամը կը պտտմէ որդիներ-
րուն ու թոռներուն՝ արարքները հի-
նուուրոյ հերտներուն, կամ երկրին
մէջ ընդհանրացած բարբերէն քաղ-
ուած վէպ մը: Ախ, քանի՜ յիշեմ
մեր վառարանը, որ յաճախ նոր փայլ
մը կ'ստանար ազնիւ գրացիներու
ներկայութեամբ, և ուր, ընտանեկան
գեղջուկ ու մագիչ պատկերներ կը
խողանցնէին մանկական աչքերս,

քանի՛ յիշեմ նուիրական կեդրոնը մեր ընտանեաց, կը ցանկամ նորէն մանկանալ, նեաուիլ ծնողքիս գերկը ու շոյել անոնց երեսները...: Այսպէս, այդ վառարանին եզերքը կասարուած է կեանքիս կրթութեան նախնական և հիմնական ջուղը. հոն լսած եմ լեռնցի որսորդներուն կամ հայրենեացս ու նախահարցս պատմութիւնը:

Գիշերը կ'առաջանար, աչքերը կը ծանրանային, քնոյ քաղցրութիւնը տակաւ կ'աւելնար, քիչ քիչ կը քաշուէինք վառարանէն: Մայրիկս, մահիճս փռեց, ճակատս խաչակնքեց ու պակեցնելով զիս՝ յուշիկ մը հեռացաւ քովէս. կրակին բոլորտիքը նրստողներուն ձայները գեռ կ'սրուշէի. հա՛գարտ քուն մ'եկաւ փակեց արտեանունքս, արդէն քնացած էի: Յանկարծ խուլ ձայն մը զարկաւ աւանջիւս, արթնցայ, փողոցին մէջ կենդանեաց տանաձայնը կը լսուէր, բակ դուռը զարկին, տունը շարժման մէջ էր, ես ալ ելայ, մահիւրերը վառեցին, վաղ իջան՝ վերը մինակ մնալ չ'ուզեցի, շատով հեռեցայ իջնողներուն, մեր ճերմակ շորին էր բեռնաւորուած բաւաւիսով, և եզրայրս որ քունի մը շարժութ առաջ մեկնած էր Անդրունի գիւղերը, կը վերադառնար այն գիշերը, բոզէ վերարկուին մէջ փաթթուած, գլուխը շալ կապած, ձեռնոցները դրած, երկայն սև կօշիկը հագած, կտրիճ լեռնցի մ'էր հազիւ տաննուլ տարեկան: Շուտով փարեցայ վզին. «ի՛նչ բերիք ինձի»ն կրտնցի, ժպտելով համբոյր մ'տուա

ու գրկելով զիս վեր հանեց. քունս փախած էր, նորէն շարունեցանք վառարանին եզերքը: Քիչ մ'անդին հարց պատահանիք փոխանակուելէ ետք՝ — սրոնցմէ բան մը չէի հասկնար և պէտք ալ չունէի հասկնալու — կաշիէ պարկ մը հանեց փոքրիկ. խաւուրուա՛ բերած էք, կինճի որս. տեսնելու էր հօրս երեսին զուարթութիւնը, մօրս շողշողուն ճակատն անպատում հեշտանքով, ի տ'ուիլ իրենց կտրիճ տղուն, որ Անդրունի գիւղերուն մէջ տեղի ունեցած սպանկան գէպքերը կը պատմէր. քանի մը թուրք պէյերու անուններ յիշեցի, որոնք միտքս պահելու չափ արժէք չ'ունէին քովս, պատմեց նաև թէ՛ ինչպէս խմբովին գացած էին կինճ որսալու և թէ՛ Անդրունի խիտ անտառներն ս'ըջափ լեցուն էին այդ անճառնի — թէև աննդարար որս հայթայթող — վայրի երէններով: Այդ պատմութիւններէն սկսայ տակաւ փափազ մը տածել զիտնալու թէ՛ Չէյթունէ գառ կա՞ն ուրիշ քաղաքներ ալ. կա՞ն անտառներ, մեր անտառներէն զատ, լեռներ մեր լեռներուն պէս. գետակներ՝ մեր գետակներուն չափ գեղեցիկ, մէկ խօսքով, գիտնալու թէ՛ հայրենիքս մինակ չէ՛ր երկրին վրայ...: Մանկային ազիտութիւն. փոքր ըղեղիս մէջ գժուար էր ըմբռնել մարտակին անըմբռնելի մեծութիւնը: Ահա՛ քայլ մ'ալ տո՛ւ գէպ ի ծանօթութեանց սահմանները:

(Շարունակելի) ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ



ՔՄԱԾԻՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

Գ Ե Ս Տ Ա

Հազիւ քսան և հինգ անգամ՝ տեսած արմաւենիներու ծաղկիլը՝ վէստա Եւայի այն թուփերէն է որոնց համար շինուած չ'է նոճեհասակ բառը — ինչ որ սակայն բան մը չի պակասցնէր ամբողջութենէն այն սխրալի շնորհներուն՝ զորս այնքան շուայօրէն գրած է Ստեղծողը իր այդ ձեռակերտին մէջ: — Խանդակաթ ծնողներու գիրկը անած ու մեծցած՝ ինչպէս մանիշակ մը ստուերսա ծմակին խորը՝ վէստա իր անձին վրայ կ'արտափայլէ գրգռնոյշ և զգայնիկ խառնուածքի մը բոլոր յատկանիշները, և իր վարդուն ու հառուն տարիքին մէջ իսկ, ուր թեւակոխած է արգէն վարդի գեղաթոյր փթթումներով, կը գրծկամակի կարծես թողուլ ծնողական սիրաջերմիկ ծոցը, հոն գտնելով սիրոյ՝ գրբովի ու խանդազատաւորի անուշաւ աչքիւր մը:

Իր գիցանոյշի ծանր և ուղղաբերձ քաղաւածքը՝ մեղհորօք նազանքով մը համաշափաւած՝ կը յիշեցնէ նախնի Հոմայեցի պատրիկոհները որոնք գոռալ այլ վեհօրէն ազնիւ՝ յաւիտեանական քաղաքին հրապարակներուն ամբողջ կը հիացնէին իրենց յանկուցիչ գեղով. իր զոյգ մը աչկունքը որոց մէջ երկինքի կապոյտը կը հաւլի, հազիւ կը համարձակին բացխրփիկ կապերու նրշագիծ ճեղքուածքէն արձակել մարմնուն կայծեր որոնք շանթերու կը փոխուին՝ երբ հարկ բլայ խորտակել պազշտ ու յայրատ նայուածքներ:

Եւրօպական կրթութիւնը զոր նոյն իսկ Եւրօպայի մէջ ստացած է վէստա իր մանուկ հասակէն, ո՛չ միայն չ'է խաթարած իր ցեղին և իր սե-

ւին բնածին բարեմասնութիւնները, այլ և գեղայարմար պատուաստումով մը՝ անոնց վրայ աւելցուցած է արեւմտեան բարեկրթութեան և կենցաղագիտութեան ընտիր ձիրքեր, ճոխացուցած է անոր մտքի ու սրտի գանձերը, անվթար պահելով հայեցի պարկեշտ ու ազնիւ կերպեր, անտեթեւեթ ձևեր՝ գերծ կապկային ծեփծեքումներէ ու թեթեւափա լեզուազարութենէ. վառ պահելով մանաւանդ սէրը հայ լեզուին ու հայ կրօնին՝ որոնք լայն տեղ մը կը բռնեն իր բարեպաշտիկ ու ասհմասէր զգացումներուն մէջ, սէրը հայ ցեղին որու վիշտերը, ուրախութիւններն ու յոյսերը լիովին կ'զգայ իր գիւրազգած սրտին խորը:

Պարկեշտ ու ամօթլեամ՝ վէստեան կոյսի մը չափ, անխօտուկ ու վեհերսա, լեզուազէտ այլ ո՛չ լեզուանի՝ սիրուն toupet մը, զուարթ causerie մը կ'ըստանայ վէստա՝ մտերմական համախըմբումներու ու երեկոյթներու մէջ, իր արծաթի նրբահնչիւն ձայնով նոր սգևորութիւն մը ընկերութեան մէջ և հրապոյր մը աւելի գնելով իր գեղեցկութեան վրայ. իսկ երբ լուրջ ու վարկապարաղի շարժումով մը գաշնամուրին առջև անցնի և իր սիրուն մասները սաստատեն ստեղնաշարի սուկորներուն վրայ՝ մերթ գոռացող շեշտեր մերթ նուազուն մրմննջներ քաղելու նուազարանի թեշերէն, իբր քաջավարժ արուեստագէտուհի մը կը յաջողի խել ունկնդիրներու խանդավառ հիացման ծափերն ու ներբողները որոնք իսկոյն վարդերու շաւազունանքը կը տեղան իր թխագեղ այտերուն վրայ:

Ընկերական և ընտանեկան լայն յարաբերութիւններու պակասը, ընդամին հպարտութիւն մը և ծայրայեղ զգուշաւորութիւն մը՝ ցարդ անմատչելի ըրած են վէստա ո՛ր և է թեկնածութեան, և հակառակ իր ֆիզիքական ու բարոյական գերընտիր արժանիքներուն՝ ո՛չ մէկ երիտասարդ համարձակութիւն ունեցած է զար-

պաս մատուցանելու վէստային որ աւայժ ո՛ր տարրամ՝ ըզձանքներով ծիրանի անուրջներով կ'օրօրուի, մինչև որ օրին մէկը կուբիտան գայ մեզմիկ սպրդի ու բռնկցնէ անոր սրտին մէջ անձանօթ զգացումին կայծը ու քսան և հինգ գարուններու երազած մատտիպարը ԳՆԵ անոր տօնց ատջն:

ԳԻՄԱԿ

Մ Ի Թ Ի Ն Կ Ն Ե Ր Ն Յ Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գահիրէի Միրիկիը. — Ազատ երկիրներու հայութիւնը տեղեկանալով թէ՛ Չարի առաջարկած Զէնընկէցութեան վեհաժողովը պիտի գումարուէր ամսոյս 18ին ՚ի Լահէյ, Հօլանտայի մայրաքաղաքը, մասնակցութեամբ 26 յայտնի պետութեանց, ամեն կողմէն շարժման ու կենդանութեան նշաններ ցոյց տուաւ. Եզիպտահայերն ալ, քաջալերուած ձեռնհաս ու շարժման նախանձախնդիր մարմիններու յորդորներէն, ինչպէս նաև անհատական նախաձեռնութեամբ կալ ինուած հրաւէրներէն, պատրաստուեցան իրենց ալ ձայնը հասցընել զիւսնագէտներու խաչած անանջներուն, աչքի առաջ ունենալով անոնց գումարման նպատակը առիթը: Սակայն, այդ շարժումը, ինչպէս Ալէքսանդրիա նոյնպէս ալ Քահիրէ լոկ երիտասարդութեան փոքրիկ խումբի մը մէջ կը նշմարուէր: Յաւալի էր անոնել տեղական հայութիւնը ներկայացնող — գոնէ ձեռակերպութեամբ — Ալլ. Գառառ. վարչութեան, թաղական խորհրդի, եկեղեցայան գասակաղզի, Ալքրաստաննա Բ, Բաշեգործական, Ընթերցասիրաց և ուրիշ անոյս ու յայտնի, ծանօթ ու անձանօթ ընկերութեանց բացակայութիւնը՝ միթիւնկ կազմակերպելու և յաջողութեամբ ձեռնարկին ու ջանքին մէջ:

Արդեօք տիրող անտաշտութեան ու չէզոքութեան իրողութիւնը չ'ապացուցաներ պարզապէս թէ՛ այդ հանրային մարմինները չ'են կանգնած իրենց արժանի բարձրութեան վրայ և թերի կը գտնուին կենսական ու նոյնիսկ ամենատարրական պարտականութեանց մէջ: Հայկական խնդրոյ վերաբերմամբ ա՛յնքան կարևոր եղող ներկայ պարագաներում, այլալիկներու նման մեր ազգային ազա-ջօջերը գեռ օտարութիւն պիտի պահպանէին և եթէ Եզիպտոսի պէս աշատ երկիրի մը մէջ վախէ կա՛մ անձնական սրէէ շահէ թեյալբուած՝ չ'պիտի բարեհաճէին Միթիւնկի ներկայ գրա, նուէլու և զայն ստուարաթիւ կացուցանելու հարկաւոր յորդորներն իրենց շրջաններուն մէջ կարգալու, աւելի խնդրոյ վարուած կ'ըլլային եթէ՛ քիչ մը զգուշութեամբ ստանձնէին իրենց փափուկ պաշտօնները, քանի որ գժուար չէ նկատել թէ՛ հայ գաղութները այժմ աւաւել քան երբէք ըմբռնած են թէ՛ այդ վարիչները ձեռ, անուան կա՛մ պատուոյ համար չէ որ կ'ընտրուին, այլ ընտրողները կը փախագէին անոնել անոնց մէջ հանրութեան առաջնորդներ: Միթէ չեն տեսներ որ կուտակցական հակառակութիւնները, անձնական հաշիւները չքացած էին ընդհանուր ժողո-

վերջական բնաւորութիւն կրող սոյն ձեւնարկութեան առաջ...

Սակայն, ընթերցողը կը պատրաստուի առարկել. բարեկա՛մ, անոնք ոչ միայն միթիւնկներու խնդրի մէջ պարտազանց են, այլ և եկեղեցական, գաղտնական, բարեգործական գործերը — չնչին բացառութեամբ — երեսի վրայ ձգած են, այնպէս որ, շատ ժամանակէ ի վեր, ամեն տեսակ յարձակումներ չեն կրնար ազգել անոնց եզրագոտի մէջ այլակերպած ուղեղներուն վրայ. իսկ ինքնուրոյն երկատարողութիւնը չ'ունի հասարակութեան անտարբերութեանը դէմ մտքառելու չափ բառական ոյժ, որպէս զի մաքրէ գործունէութեան և յառաջդիմութեան առարկէրը: Այս ու այսպիսի պատճառաբանութեանց դէմ բռնիք մը չ'ունենալով՝ ներողութիւն կը խնդրեմք ընթերցողէն սկզբնական նիւթէն շեղելու համար ու կ'անցնեմք Միթիւնկի նկարագրութեան:

Մայիսի 20ին հրատեղները ցրուեցան ժողովրդի մէջ, կարգազիր յանձնախումբի մը կողմէն ու 21ին կիրակի, կէսօրէն ետքը, ժաւը 3ին. ֆրանսացի հանրաժանօթ Սիբլ Սֆէնքսի տէր Պր. Ժուպէռի վէլտարովին մէջ, վեց հարիւրէ աւելի երկսեռ հայ բազմութիւն մը գրաւած էին արարական ճաշակով զարգարուած ու վարադոյրներով ծածկուած հրապարակը: Յանձնախումբին առաջարկութեամբը՝ Տիար Պ. Պ. կարողեան ընդունեց Միթիւնկի նախագահութիւնն ու հրապարակը նայոյ պատրջգամէն բանի մ'ամփոփ խօսքերով բացատրեց հաւաքումին նպատակն, և ճառախօսներն հրաւիրեց ելնել ամբիոն: Յաջորդաբար չորս հօգի, Տիար Ս. Բիւրատ, ֆրանսացի Մ. Ժիւլ Միւնիէ՛ նախկին խմբագիր Գուրիէ ա՛Օրիանի և այժմ ուսուցիչ

կեզը, կրթարանի, Տիար Զէքի և Տիար Վահան բացատրեցին ժողովրդին խաղաղասէր գումարման կարեւորութիւնն ու նշանակութիւնը: Ճառախօսները պարզաբանեցին հայկական պահանջներուն բնութիւնն ու հարցին հետզհետէ ստացած երկայթները, հիմնուելով եւրոպական մեծ՝ Տէրութեանց հանդիսաւոր յանձնառութեանց վրայ, զանազան շրջաններում. 1. Սան Սթէֆանօյի հաշտութեան մէջ, զոյացած համաձայնութեան մը համեմատ 18րդ յօդուածը: 2. Պէրլինի վեհաժողովին ընդունած 61րդ յօդուածը: 3. 1893ի կ. Պոլտոյ Դեսպանաժողովին կողմած՝ հայաբնակ գաւառներուն մէջ մուծուելիք բարենորոգումներու ծրագիրը որ և Սուլթանին կողմէն ալ հաւանութիւն գտած, և սակայն երեքն ալ մեռած տառ մնացած են, այն հզօր պատճառաւ որ եւրոպական մեծ Տէրութիւններն իրենց յախուռն, բայց սառամնուող պահանջներով, հայերը զրգուած, մղած էին զէպ մի նոր ապահով կեանքի հաւանականութիւնը: Յիշուեցաւ նաև թէ՛ Եւրոպա՛ էր բնական պատասխանատուն այն անտանելի զրուութեան, որ հետեանքն է Չարգերուն, զաղթային հասանքին, սովին ու խուլ հալածանքներուն: Հետեալբար անհրաժեշտ է զիմել Զէնընկէցութեան, վերջերս բարեփոխուելով խաղաղութեան վեհաժողովին, կրկին յիշեցնելու համար թէ՛ եթէ չեն ուզեր իրենք ճնշուած ազգ մը նետել ապստամբութեան գիրկը, անխուսափելի է վերցնել ներկայ դառն ու կործանարար վիճակը:

Ճառերն աւարտուէն ետք ժողովրդին մէջէն Տիար Ազատեան, յուզեալ շեշտերով թարգման հանդիսանալով ներկայից փախազին, հակիրճ բայց զեղեցիկ բանախօսութիւն մ'ըբաւ: Այնուհետև Միթիւնկը միաձայն հա-

անութեամբ և մեծ ոգևորութեամբ ընդունեց կարգադիր յանձնախումբի հետեւեալ առաջարկութիւնները.

1. Ղրկել անմիջապէս լահէյի վեհաժողովի նախագահին հետեւեալ հեռագիրը. «Կահիրէի Հայերը մեծ Միջինկ գումարեղով կը քահանայնեան Խաղաղութեան վեհաժողովին նեցուկը, Հայաստանի մէջ իրական քարենորոգումներ ապահովելու, եւրոպական Տէրութեանց հսկողութեան տակ»:

2. Ընտրել զՏիար Մինաս Չէրազ — որ արդէն ընտրուած է նաև ուրիշ Հայարնակ քաղաքներէ — պատուիրակ լահէյի վեհաժողովին քով, Գահիրէի Հայոց կողմէն, պաշտպանելու հայկական խնդիրը, համաձայն Միթինկի որոշման:

3. Տիար Ազատեանի առաջարկութեան վրայ, մնայուն դարձնել Գահիրէի կարգադիր յանձնախումբը, արտօնելով որ կանոնաւոր յարաբերութեան մասնէ նորընտիր պատգամաւորին հետ, և ի պահանջել հարկին, գումարումներու միջոցաւ հազարակութիւնն իրազեկ ընէ:

Միթինկը ցրուեցաւ երեկոյեան ժամը 7ին, ընդհանուր գոհունակութեան յայտարար բուն ծափահարութիւններու մէջ:

Եղած ու ըլլալիք անհրաժեշտ ծախքերու գէժ դնելու համար Միթինկին մէջ փոքրիկ հանգանակութիւն մը բացուեցաւ, որմէ 11 անգլ. ոսկւոյ չափ գումար մը գոյացաւ, մեծ մասը չքաւոր դասակարգին առատ ու սրտաբուխ նուէրներով:

Միթինկէն քաղցր տպաւորութեան տակ մեկնին ինքնին ապացոյց մ'է ժողովրդին՝ հայկական հարցով լուրջ հետաքրքրութեանը: Միթինկին մընայուն յանձնախումբը կազմած է արդէն իր Դիւանը, ուղղակի յարաբերութեան մասնելու իր Պատուիրա-

կին հետ, նաև, եւրոպական ու ամերիկեան կարեւորագոյն թերթերուն մէջ հայկական հարցի ուշադրաւ մասերը պարզելու համար:

Քանի մը ժողովականաց յայտնած փափաքին համաձայն ստորեւ կը դնենք Մ. Միւնիչէի խօսած ճառին հայերէն թարգմանութիւնը:

Տիկնայք եւ Տեարք.

Նախ թոյլ տրուի ինձ որ շնորհակալ ըլլամ հայկական գաղութին այն վստահութեան համար, որով պատուել կ'ուզէ զիս, հաղորդ ընելով իր ցնծութիւններուն, իր տրտմութիւններուն և իր յոյսերուն:

Բոլոր սրտով կը կցեմ այսօր իմ իղծերն ձեր իղծերուն, զոր կը տածէք ձեր օրինաւոր բաղձանաց իրագործման համար: Այս հանդիսաւոր գումարման մէջ, ուր ձեր բոլոր հոգիները դարձած են դէպ 'ի սոյն վստմ մտատիպարը մերկայացնողները. «Աշդարութիւն խաղաղութեան մէջ», կուզամ լոկ ձեզ ամենուր հետ կատարել գործ մը հաւաստի, գործ մը յոյսի և գործ մը մարդասիրութեան:

Միթէ՞ երազ մ'է բաղձալը այն ընկերային մտատիպարին ուր պատեբազմը պիտի ամհետամայ, ու վերջապէս ամեն մարդ պիտի ունենայ իր արդարութեան, ազատութեան և երջանկութեան բաժինը: Եթէ երազ մ'է այս, քաղցր է այսպէս երազելը: Ասի լաւագոյն չէ՞ քան թէ երազել ժողովուրդներու շախչախումբը, սիրելու և ո'չ թէ ատելու համար ստեղծուած էակներու ստրկացումը: Տեսակամօրէն, ամբողջ աշխարհ համաձայն է, միջոցներուն ընտրութեանը մէջ միայն կը տարբերին իրարմէ. հազիւ հարիւր տարի առաջ, խենդի տեղ կը դնէին այն իմաստասէրները, որ ազնուագոյն զգացումներով մերջնուած, կը կանխասէին թէ՛ այս լուսոյ, գիտութեան, ընկերվարութեան դարը չը պիտի վերջանար առանց տեսնելու բոլոր ազգերուն իրարու ձեռք կարկառելմ եղբայրական համաձայնութեան մը մէջ, որպէսզի յաղթանակեմ խաղաղասիրական և տիեզերական համերաշխութեան գաղափարները. կ'ըսէին այն միևնոյն իմաստասէրները թէ՛ ժողովուրդները պիտի կործանէին միահեծան բոնակալութիւնները, որոնք հպատակին կը կրե-

ցընեն իրենց անգութ մականներուն տակ։ Այն իմաստասէրները, երեկուսան խննդ կոչուածները, այսօր նկատուած են իմաստուններ, մարգարէներ։ Հիմայ կը խոմարհինք անոնց վարդապետութեան առջև։ Այսօր կը պաշտեն ինչ որ երէկ կ'այրէիմ և կ'այրեն ինչ որ կը պաշտէին։

Ուրեմն հաստատ նաւատք ունիմ Արդարութեան յաղթանակին վրայ։ Ամասան հաւատքով կը տապալիմ լեռները, ահա՛ թէ իմչու՛ կը կատարեմ հաւատքի գործ մը։ և կը գոչեմ բարձրաձայն. «Կը հաւատամ արդարութեան և երջանկութեան դարագըլիտ մը գահակալութեան, զոհօ՛ կը հաւատամ։

Կը հաւատամ և կը յուսամ։ Արդարութիւնն անյեղլի է, կախում չունի ոչ ժամանակէն, ոչ տեղերէն, ո՛չ ալ նախապաշարումներէն. չկրնար ան ո՛չ անցնիլ, ո՛չ վերածնիլ։ Ամի կա՛յ և իր յաւիտենական աղբիւրն ունի ա՛նն իմաստուն մարդու սրտին ու անոր պարտքերուն ահադարտելի կանոններուն մէջ։

Երբ կը տեսնեմ թէ՛ ինչպէ՛ս այն քաջարի հայ ժողովուրդն իր յորդ արիւնը կը թափէ անվեհեր, երբ կը տեսնեմ թէ՛ ի՞նչպէս կ'իյնան իր մարտիրոսներն առանց թուլանալու, բարձր սրտով ու սևեռ մայուածքով. երբ կը նկատեմ թէ՛ ինք միշտ հաւասար մնացած է դէպքին բարձրութեանը, ամենավատ ծախողութեանց միջև. երբ հազարաւոր վկաներ կը պատմեն թէ՛ ձեր եղբայրներ դէ՛մ առ դէ՛մ գտնուած են իրենց բռնապետին հետ, պահելով այնպիսի դիրք մը, որ կասկածել տուած է է թէ զրկեալէն կամ զրկողէն, ո՞րն է իսկական տէրը, ա՛լ տարակոյս չէր մնար այսպիսի ժողովրդի մը կենսունակութեան վրայ, ու ես կը յուսամ։ Այո՛, կը յուսամ թէ՛ այնքան մեծութիւն, այնքան հաստատամտութիւն և այնքան հիանալի գոհաբերութիւն պիտի վարձատրուին ի մօտոյ։

Մտղասիրական գործ, — Մեր մեծագոյն գիտուններէն մէկը դեռ շատ ատեն չ'եղաւ կը գրէր. «Այլանդա՛կ կազմակերպութիւն ընկերային. մարդկութիւնը բաժնուած է պետերու մատնուած հօտերու, և ատեն ատեն կը տեսնուի որ այդ հօտերը, կատարի յիմարութիւնէ մը բռնուած, իրարու վրայ կը յարձակին շղթախաղերձ, կը հնազանդին մէկ լնշանին բուռ մ'արիւնկզակ չարագործներու, որոնք այն հօտին շնորհիւ կ'ուպրին, և պատերազմիմ ժամն չ'իրան՝ կը հնծէ արիւնաներկ դաշտերուն վրայ

հասուն հասկերու պէս ինկող զոհները։

Այնքան սարոռափոներ բացին վերջապէս անքերն անոնց որոնց սրտին մէջ ազնիւ զգացումներ կան։ Խորհեցան թէ՛ մարդ թրաւունք ու պարտք ունէր սիրելիւ իր ընտանիքը, սիրելու իր նմանները, և ամենէն աւելի, սիրելու, զգուելու իր հայրենիքը։ Ատելութիւնը կը բաժանէ, ատելութիւնն ամուլ է։ Անոր ետև կը կուտակուին աներակները, ահաբեկումը, մահը։ Մէրը կը մօտեցնէ, սէրը բեղուն է. ամոր թեալ կ'ընծիւղին դիւցազնական առաքինութիւնները, սխրագործութիւնները, վերջապէս կեանքը։ Դէպ ի Աշխարհ ունեցած իր կրթոտ ու խօլական սիրովն էր որ քրիստոս փրկեց մարդկութիւնը։ Յիմար սիրով մը սիրելով միայն պիտի կրնանք ուրեմն հաւատքը յոյսն ու սէրը նուիրական ընծայել և ըսել. «Կը հաւատամք հայկական դատին արդարութեանը կը յուսամք անոր մօտալուտ յաղթանակը։ Մեր բոլոր հոգիով կը սիրենք այն ազնիւ ազգը, գորի մահատակներուն արիւնը նուիրագործեց, և անո՛վ պիտի ըլլայ ազատ ու փառապանծ. «Ապրի՛ չայաստան»։

Ժ. ՄԻԻՆԻՅԷ

Աղեֆասնորիոյ Միթիակը. — Մայիս 21ին կիրակի, Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ գումարուեցաւ 500 հոգիէ բաղկացեալ հայկական Միթիակ մը, նպատակ ունենալով՝ Լահէի վեհաժողովին առջև հայկական դատը պաշտպանող պատուիրակ մ'ընտրելու։ Միթիակին նախադահեց Տիար Մ. Գալֆայեան, Պոլսեցի, պարկեշտ յանձնակատար մը, որ կ'ըսուի թէ՛ Աղեքսանդրիւ Հայոց կողմէն իբրև պատուիրակ ՚ի Լահէյ պիտի զրկուի, Տ. Չէրադի աշակցելու համար։ Գնահատելով հանդերձ մեր արգոյ դրացիներուն եռանդը, չափազանց կը գտնենք զայն. նկատելով թէ՛ միայն մէկ ձեռնհաս ու վստահի պատուիրակ ունենալը լուազայն է քոն թէ՛ ամեն մէկ քողաքէ մէկ պատուիրակ, ինչ որ ծաղրիի և անիմաստ պիտի նկատուէր։ Միթիակին մէջ 800 զրշի մատ գուամար մը հանդանակուած է հեռապ-

բական եայն ծախքերու համար վեց Մեծ-Տէրութեանց աղբարին դարձոց նոյնարարներուն, Ամերիկայի Միացեալ Նահանգաց նախագահին, նաև Լահէի վեհաժողովոյ նախագահին զատ զատ հեղադիրներ քաջուած են նոյն օրն հետեւեալ իմաստով.

«Լահէյ, ինդաղութեան վեհաժողովոյ նախագահին — Աղբարանդրոյ հայ գաղթականութիւնը գումարելով արտապուր Միթինկ կը թախանձէ վեհաժողոյն միջամտութիւնն, ապա հոյժելու համար խաղաղութիւն ի Հայաստան, եւրոպական Տէրութեանց հսկողութեան տակ : նախագահ Մ. Գարֆայեան :»

Թողունք ուրիշ անպատեհութիւններ որոնք կրնան ծագիլ այդպիսի յախուռն չըսենք անգիտակից ընտրութիւններէ, Տիար Չէրազի պէս փորձուած, անարատ ու ճշմարիտ հայրենասէր մը չի բաւեր հասկըցնելու մեր բոլոր փափաքներն ու բարքերը ...

Տ. հեռագիրներու համար վճարուած է 16 րոպէ, որուն կէսն արդէն հանդանակուած, մնացեալն ալ պիտի առնելի տեղոյն շոյներէն, որոնց բացակայութիւնը շեշտուած է Միթինկին մէջ : Հասարակ ժողովոգին եռանդն ու պաշտօնի գլուխ եղող կամ անպաշտօն շոյներուն անտարբերութիւնը մրցման մէջ էին այն օրը : Բ.

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐ ԵՐ

Հայոց ընկերաց. ընկ. ներկայացումը. — Ամսոյս 18ի հինգշաբթի երեկոյն քաղաքիս Օբէրայի թատրոնին մէջ տրուեցան կարգ մը ներկայացումներ ի նպատակ վանայ սովեալներուն. միջազգային հանգամանք մը ունէր այն. իտալացի արուեստագիտաց խումբ մը, դերասան ու դերասանուհի, երգիչ ու երգչուհի, իրարմէնուազ տարբերութեամբ զբօսայի ժամանց մ'անցընել տուին ներկայից իրենց մերթ ողբերգակի մերթ կատակերգակի դերերովը, միայն Օրձիանֆրանչէսքոյի բունադրօսիկ ու կեղծ խաղերը և Տիար Թօրինօ Ժ. Բարվիսի բնական ու ներշնչեալ ձայնի թրթռումներն ու ելեէջները խոտոր կը համեմատէին : Ողբացեալ Չուհաճեանի աննրժան եզանակները՝ ազաւաղուած էին այն գիշեր անգլիական զօրաց նուազածութեան մէջ. — պարադայ որ սակայն չ'կրնար արգիլել մեր ազգային գոհունակութիւնը յայտնելու հրապարակաւ այդ անգլիական երգեցիկ զօրախմբին :

Վերջի կատակերգութիւնները ո՛չ նուազ հաճոյալի տպաւորութիւն մը ձգեցին ներկայից վրայ : Ամբողջութիւնը լաւ էր երանի՜ թէ բաղձացեալ գումար մը կազմէր անոր հասոյթը, որուն որքանութիւնը դեռ չենք գիտեր գժբազդաբար :

— «Լ'Օրօր» ի կը հեռագրեն Լահէյէն Մայիս 21ին.

«Երէկ իրիկուն ի Լահէյ Անկլօ-Ամերիկեան գումարում մը տեղի ունեցաւ. ներկայ էր Տիար Մինաս Չէրազ զոր Պուրկարիոյ հայ գաղութները Խաղաղութեան վեհաժողովին առջև պատգամաւոր ընտրած են : Ուսուցիչը յայտարարած է թէ՛ վեհաժողովը այն ատեն միայն իրական արդիւնք մը կ'ունենայ, երբ Հայաստանի, Մակեդոնիոյ և Ալլաո Լօրէնի խնդիրներուն արդարագատ և խաղաղասէր լուծում մը տայ :»

Տիար Մինաս Չերազ վեհաժողովի նախագահին աղբարագիր մը տուած է արդէն, հայկական նահանգներու քրիստոնէից նկատմամբ թուրքերուն և

քիւրդերուն. տակըճած գրութիւնը բացատրող յիշեցնելով Սալթանի հպատակ հազարաւոր հայերուն Պոլիարիոյ Միթիւնիներուն մէջ քուէարկած որոշումները:

Տէրութիւնները վերջնաբար քաղաքական խնդիրները վեհաժողովի ծրագրէն դուրս հանած ըլլալով՝ Տիար Մինաս Զէրաղի շանքերը գործնական արդիւնքի մը չ'պիտի կրնան յանդիւթէէ մարտիրոսներու այս երկայն ցանկին (martyrologe) ընթերցումը, հայոց կատարածներու յիշատակը արթնցնելով, պատգամաւորներու վրայ խոր տպաւորութիւն մը պիտի առաջ բերէ:

Փանսախս յ'Աղեխաւկոյրիա. — Մայիսի մէջ 4 գէպքեր տեղի ունեցան ժանտախտի, որ բարեբազդաբար ճարակող տեսակէն չէ, ինչպէս որ կը հաստատեն անողջապահական վարչութեան կողմէն արուած տեղեկութիւնները: Սակայն անունը միայն կը բաւէ սարսափի մէջ ձգելու վախկոտ

կենցաղատէրները, և այսպէս, ընդհանուր, ահաբեկիչ տարակոյսը սպրդած մտած է բոլոր հոգիներուն մէջ, ու կը վախնան, կը վախնան որ չը տարափոխուի և չ'վարակուի բովանդակ եգիպտոս: Այս քանի մը տողերը նուիրեցինք միան իբրև տեղացին լուր նկատելով այս լուրը ժանտախտի, որուն ի մտոյ կը յուսանք տեղեկ վերջապէս անհետանալը, բաւական է որ կառավարութիւնը ձեռք առնու հարկաւոր ազգու միջոցները: Վերջն պահուն Բրոկրէիի մէջ կը կարգանք սակայն թէ՛ ուրիշ 4 գէպքեր ալ եղած են Ալեքսանդրիա և 2 ալ հաս, ի Պապ-էլ-Շարիյէ:

— Լրտես-Յեղափոխական Քարտուզար Տիրան Գէլէկեան, թուրք բաշայի մը հետ Լահէյ զրկուած է Սուլթանի կողմէն, Հայերուն ու Երիտասարդ-թուրքերուն գործերուն կրտսելու պաշտօնով:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Պասնական. — 1898 Օգոստոս 29ին շանթի հարուածի մը պէս լուեցաւ այն լուրը թէ՛ Ֆրանսայի գաշնակից Զարը կ'արձակէր ընդհանուր Զէնընկէցութիւն, տիեզերական խաղաղութիւն հոշակող խիստ մը կայսերութեան պաշտօնական թերթը կը հրատարակէր Նիքոլա Բ-ի հրամանագիրը որով Պ. Մուրավիէֆի կը հազորդուէր Զէնընկէցութեան բարձրագոյն դիտաւորութիւնը, հրամայելով միանգամայն՝ առաջարկել վեհաժողովի մը գումարումը՝ համենքու համար այս գերազանցապէս մարդասիրական նպատակին: Իրաւի, միևնոյն օրը, կայսրութեան նախարարապետը՝ համաձայն իր վեհապետի բողձանաց՝ չըրջտերահանով մը կը հրաւիրէր Տէ-

րութիւնները գտնելու այն յարմարագոյն միջոցները որոյնով կարելի ըլլայ ժողովրդոց ապահովել տեական խաղաղութիւն մը և վերջ տալ սլաւոադինութեանց ահռելի յառաջխաղացման:

Երոպիոյ հզօրագոյն վեհապետին կողմէ յանկարծական կերպով արտայայտուած այս ազնիւ մտածումը շատ ազմուկ հանեց: Մինչև այն ատեն մասնաւոր գումարումներու մէջ միայն ծեծուած էր Զէնընկէցութեան փափուկ խնդիրը և նկատուած էր այն իբր վեհանձն խրօփի մը: Սակայն Զարին առաջարկին վրայ անգամ մըն ալ իրաւունք տրուեցաւ Հերպերթ Սթենարթի, որ կը հաստատէր թէ՛ ինչ որ այսօր խրօփի մըն է, կրնայ իրա-

կանութեան փոխուիլ վաղը: Յետոյ ամեն ոք ինքնիրեն հարցոյց Ձէնրնկէցութեան նախաձեռնարկը պիտի կրնայ գործնական արդիւնք մը յառաջ բերել, հիմա որ մեծ Տէրութիւնները շահ ունին անոր մէջ:

Այս ծանրակշիռ խնդրոյն վրայ վիճարանելու համար Տէրութիւնները համաձայնեցան Վեհաժողովին իբր կեդրոն ընտրել Հօլանտայի մայրաքաղաքը, և այս երկրի արտաքին գործոց նախարարին յանձնուեցաւ կարգադրել նախապատրաստական գործողութիւնները Վեհաժողովին՝ որու բացման թուական որոշուեցաւ 1899 Մայիս 18:

Նախապատրաստական նիստերուն մէջ նուիրակները ամենէն առաջ որոշեցին որ այս գումարումը կոչուի «Խաղաղութեան Համաժողով» Խաղաղութեան Համաժողովը կը մերժէ ամեն խնդիր որ ուղղակի կապ չունի Ձէնրնկէցութեան առաջարկին: Հետեւապէս համաժողովի աշխատութիւնները պիտի կայանան միմիայն քանի մը առաջարկութեանց քննութեան մէջ, ինչպէս սպառազինութեանց աստիճանական նուազումը, պատերազմական ընկալեալ օրէնքներու աւելի իրնամաս կանոնադրութիւնը, միջոցառումն իրաւարարութեան գրութեան մը ընդունելութիւնը: Միացեալին համար, Համաժողովը պիտի հետևի այս կարգի միջազգային գումարումներու համար ընդունուած ընդհանուր կանոններուն:

Բացման նիստը. — Համաժողովի բացումէն քանի մը օր առաջ արուած որոշման մը համաձայն, Պ. Սթալ, Լանտարայի ուստական գեապանը՝ Մայիս 18 առաւօտուն Լահէյի ուստական եկեղեցւոյն մէջ Չարին ծննդեան տարեգարձին առթիւ կատարուած հանդիսաւոր գահաբանական աղօթ-

քին մասնակցելէ յետոյ՝ զնաց ժողովոյ բացման ներկայ գտնուելու:

Ստեանը բացուեցաւ ճառով մը զոր արտասանեց Պ. աբ Պօֆօր յանուն Հօլանտայի թագուհւոյն Համաժողովին նախագահ ընտրուեցաւ Պ. Սթալ և անմիջապէս բարձր պատուիրակներուն կողմէն երկու ուղերձներ զրկուեցան, մին Վիլհելմինա թագուհւոյն և միւսը Նիքօլա կայսեր:

Ապա Համաժողովի աշխատութիւնները բաժնուեցան հետեւեալ կերպով. 1. Ձէնրնկէցութիւն, 2. Պատերազմական օրէնքներ, 3. Միջամտութիւն և իրաւարարութիւն:

Չմունեանք ըսելու որ Պ. Սթալ, նախագահ Համաժողովոյ և մասնագամայն լիազօր պատուիրակ Ռուս կառավարութեան, Բէթէրսպուրկէ մեկնելէ առաջ, ունկնդրութիւն մը ընդունեցաւ Չարին կողմէն որ անոր պարզեց իր ծրագիրը: Նիքօլա Բ. գլխաւորապէս պնդեց հետեւեալ կետերուն վրայ պարտաւորիչ իրաւարարութեան մը իրագործումը՝ կա՛մ բազմաթիւ մեծ Տէրութիւններէն կազմուած ատեանի մը միջոցաւ, և կա՛մ Տէրութեանց ներկայացուցիչներէն կազմուած առանձին գատարանի մը միջոցաւ, բարեկամական միջամտութիւնը երրորդ Տէրութեան մը:

Չանագան կարծիքներ. — Համաժողովոյ ներշնչած յոյսերուն և ազգած երկիւղներուն նայելով, մեզ այնպէս կը թուի թէ շահեկանութենէ զուրկ չ'պիտի ըլլայ, մեր ընթերցողաց համար՝ ամփոփել հոս նշանաւոր քաղաքագէտներու և իմաստասէրներու կողմէ յայտնուած զանազան կարծիքները որոնք երեցան եւրոպական թերթերուն մէջ:

Ֆրանքօ-գերմանական պատերազմէն քանի մը տարի վերջը, մի քանի իմաստասէրներ որոնք երազովան

(տօրթիսէ) արհամարհական անունով մկրտուեցան, ձեռնարկած էին մշակելու հասարակաց կարծիքը՝ կառավարութեան ընդունել տալու համար իրաւարար ատենանի մը ծրագիրը, որու պաշտօնը պիտի ըլլար արգելել պատերազմի արհաւիրքներուն վերանորոգումը:

Պ. Քրիսթի, իտալացի համբաււոր պետական մարզը, որ 1877ին Փարիզ կը գտնուէր, Ֆրանսայի մեծ տրիբունին՝ կամպէթիթայի հետ ունեցաւ տեսակցութիւն մը զոր ինք Քրիսթի պատմած է իտալական հանդէսի մը մէջ: Երկու քաղաքագէտները խօսակցեցան այս միջազգային իրաւարարութեան խնդրոյն վրայ: Կամպէթիթա, խօսելէ յետոյ վտանգաւոր կացութեան վրայ՝ ուր կը գտնուէր այն ատեն Եւրոպա, հաստատեց թէ իրաց այս վիճակին միակ դարմանն էր «Տիեզերական Չէնընկէցութիւնը: Երբ Քրիսթի, որ յետոյ Գերմանիա գացած էր, Պիզմարքին հաղորդեց կամպէթիթայի կարծիքը, մեծանուն նախարարապետը պատասխանեց.

«Չէնընկէցութիւնը գործնականապէս անկարելի է: Դեռ բառարաններու մէջ գտնուած չ'են Չէնընկէցութեան և Սպառազինութեան սահմանները ճշդոյ բացատրութիւնները: Չինուորական օրէնքները կը տարբերին զանազան երկիրներու մէջ, և երբ բանակները խաղաղութեան վիճակի մէջ զրուին, կարելի չ'պիտի ըլլայ ըսել թէ՛ Չէնընկէցութիւնը ընդունող ազգերը կը գտնուին յարձակողական և պաշտպանողական միեւնոյն պայմաններուն մէջ:

«Թողունք ուրեմն այս փաստը խաղաղութեան բարեկամներու ընկերութեան»: — Այս եղաւ մեծ նախարարապետին ելրակացութիւնը:

Սակայն Քրիսթի, որ այս խօսքերը կը պատմէ, աւելի լաւատես է. «կը

յուսամ թէ — կ'ըսէ նա — հանձարեղ ուսումնասիրութիւններով կարելի պիտի ըլլայ բան մը ձեռք ձգել: Եթէ մեր օրերուն մէջ անօգուտ է սպասել մնայուն բանակներու ջնջումին, գոնէ պիտի կրնանք ձեռք բերել նուազում մը ահռելի և յարածուն սպառազինութեանց»:

Լորտ Պալֆուր կ'սքանչանայ Չարին առաջարկին վրայ և խաղաղութեան շատագոյութիւնը կ'ընէ, դիտել տալով թէ՛ սուղ միջոցի մէջ ո՛րչափ յառաջդիմութիւն ըրած է այս փրկաւէտ գաղափարը:

Լորտ Սալիզպըրի կը ներբողէ Չարին առաջարկը և շուտափոյթ ու երջանիկ իրագործում մը կը մտալթէ:

Բնականաբար բոլոր ուսերը մեծ հաւատք ունին իրենց վեհապետին գաղափարներուն յաջողութեան վրայ:

Ֆրանսայի մէջ ընդհանրապէս լաւատես են՝ ինչ ինչ վերապահումներով: Բայց գիտենք որ ամենէն աւելի Ֆրանսայէն ելան ամենէն կորովի տեսութիւնները ի նպաստ միջազգային իրաւարարութեան:

Եզրակացութիւն. — Սակայն ոչ ոք կրնայ անտես ընել այն բազմազան դժուարութիւնները որոնց պէտք է յաղթել: Կորագոյն երկասիրութեան մը մէջ ֆրանսացի զօրապետ մը կը գրէր.

«Վեհաժողովի մը հաւանութեամբ ազատօրէն վիճաբանուած և բոլոր Տէրութեանց կողմէ ազատօրէն ընդունուած Չէնընկէցութիւնը մը միայն պիտի կրնայ ընդունելի ըլլալ: Բայց այնպիսի դժուարութիւններ կան այս մասին որ գրեթէ անյաղթելի են»:

Չինուորականի մը խօսքն էր են ա՛նոնք, իրա՛ւ, և սակայն շատ լաւ կ'ամփոփեն տիեզերական գաղափարին հիմը:

Եթէ ուշադրութեամբ քննենք այն

գէպրերը սրունք տեղի ունեցան այն օրէն ի վեր ուր ներքա Ռ. արձակեց իր չքաբերականը ի մեծ զարմացումն բոլոր քաղաքակիրթ աշխարհի, լաւ պիտի հանգուինք արդարեւ թէ յիմարութիւն պիտի ըլլար երևակայել կամ հաւատալ որ միաձայն հաւանութեամբ և մէկ օրէն միւսը կրնայ ջնջուիլ զինուորականութիւնը: Բայց գաղափարը բեղուն է և զօրեղապէս պաշտպանուած հասարակաց կարծիքէն: Այսչափն ալ արդէն մեծ զօրութիւն մըն է ի նպաստ այս մարդասիրական երազին: Ի հարկէ կարելի չէ մէկ անգամէն իրագործել մարդ ծրագիրը, բայց գոնէ մէկ մասը պիտի կրնայ գործադրութեան գրուիլ: Եթէ մինչև իսկ այս գաղափարին սկզբունքը միայն ընդունուի, արդէն մեծ քայլ մը առած կ'ըլլանք գէպ սոսաջգիմութիւն: Չափէն առելի պահանջող չ'ըլլանք ուրեմն և չ'մոռնանք թէ մասնաւորապէս վրդովալից չքանէ մը կ'անցնինք, առ այս համոզուելու համար բառական է ակնարկ մը նետել աշխարհի վրայ:

Անգլիոյ նորագոյն սպասազինութիւնները և իր պահանջումները Եգիպտոսի և եգիպտական Սուսանի մէջ, Իտալիոյ նորոգ սպասազինութիւնները և Ման-Մոնի խորշին ինդերը՝ որ գրգիռ կ'ըլլայ իտալացւոց վերասին ձեռք առնելու աշխարհակալութեան սուրբ, նորագոյն սպասազինութիւնները Միացեալ Նահանգացոյ սրունք նոր յաղթութիւններ և իրենց գաղթային տէրութեան ընդարձակումը կ'երազեն. Գերմանիոյ նորագոյն սպասազինութիւնները և ընչսքաղցրութիւնները կիլեոմ Բ. ի որ քամահելով քրիստոնէական ամեն խղճատութիւն՝ բարեկամական ձեռք կը կարկառէ «կարմիր Սուլթան»ին նորագոյն շահեր՝ ձեռք բերելու իր

ձախաւեր պաշտպանեալին որդնահար Տէրութեան մէջ, մինչդեռ իր խրոխտ նախաձեռքը կը սեւեռի Չինական պարսպին վրայ, անձկանօք հոկեղով միևնոյն ժամանակ պարսկային ծոցին եղերքները և փլիպեան արշիպեղապար. նորագոյն սպասազինութիւնները Ճարմին որ Երուսաղէմ կը ստանայ իր զինուորականութեան պատուրը և իր նաւատորմիցը կը զօրացնէ. խուլ պայքարը զոր անընդհատ իրարու գէ՛մ կը մղին բաշմաթիւ խառն ու այլազան ցեղեր Սաւորիոյ և Պալքանեան երկիրներուն մէջ, և գոգչես Գանուրի՛ մէկ ծայրէն միւսը ալ ուրիշ բանի չէն սպասեր՝ բայց միայն նշանի մը կտտազօրէն յարձակելու համար իրարու վրայ. անկարելի ելմտացոյցները զոր սոսիպոզարար կը պահանջէ Բոլիւլիէժա զօրագետը՝ Սպանիան պատրաստելու համար ազազայ կոխներու. ուղմտէր կամէսութիւնները չէզոք ազգերուն, ինչպէս են Պեթիքա, Հոլանտա, Տանքմարգա, Յունաստան, և Բօրթուկալ, սրունք չեն հասկնար թէ իրենց զինուորական տկարութիւնը կը կայմէ իրենց մեծագոյն զօրութիւնը. հակառակութիւնը որ կը շեշտուի Շուէտի և Նորվեգիոյ միջև և որ կը մղէ այս երկու երկիրները զեղար յոչօտելու. սուսական սահմանագրութիւններու յարանուն ընդարձակումը Ասիոյ մէջ, Ֆինլանդիոյ վերջնական միացումը կայսերական կառավարութեան հետ. և վերջապէս ակներև գիտաւորութիւնը Ռուս կառավարութեան՝ առիւծի բաժին մը կորզելու Արևելքի օրհասական երկիրներուն և Թայրոզոյն Արևելքի անխուսափելի բաժանման մէջ: